# Դանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները

- Կարգավորեք քվեարկության շենք մտնող ընտրողների հոսքը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**

Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ապահովեք ընտրողների միջև անվտանգ հեռավորության պահպանում (այսպիսի հնարավորության դեպքում):

- Ընտրողին խնդրեք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և ժամանակավորապես հանել դիմակը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**

- ✓ Եթե ընտրողը չունի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, բացատրեք, որ նա չի կարող մասնակցել քվեարկությանը:
- ✓ Եթե Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր ներկայացնելու ժամանակ ընտրողը ժամանակավորապես չի հանում դիմակը, նրան թույլ չեն տալիս մուտք գործել քվեարկության շենք:

- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգեք, թե չունի արդյոք ընտրողը նշմարում, և, երբ կհամոզվեք, որ ընտրողը չունի նշմարում, նրան տվեք քվեարկությանը մասնակցելու իրավունք:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ**

- ✓ Եթե ուլտրամանուշակագույն լապտերով նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողի ով լինելը տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին:
- ✓ Այն ընտրողը, որը «ֆիզիկական վիճակի», մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը:

- ▶ Հետևեք՝ քանի ընտրող է կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ երկու ընտրող կա կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրեք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:
- ▶ Ընտրողին ուղղորդեք դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը և ընտրողի համարը ընտրողների ցուցակում:

## Նկատի՛ ունեցեք.

- ✓ Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով արգելվում է ընտրողի և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող այլ անձանց մուտքը քվեարկության շենք՝ առանց դիմակի և ախտահանիչ լուծույթով ձեռքերի մշակման:
- ✓ Նոր կորոնավիրուսով հարուցված վարակի տարածումը կանխարգելելու նպատակով թույլ չի տրվում քվեարկության շենք մուտք գործել քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձին առանց ջերմաքրինինգի (ջերմաչափման): Տենդ՝ 37°C կամ 37°C-ից բարձր ջերմաստիճան, արձանագրելու դեպքում, անձը ենթարկվում է ջերմաստիճանի վերստուգման (5 րոպեանոց ընդմիջումով): Տենդի կրկնակի արձանագրման դեպքում անձին թույլ չի տրվում մուտք գործել քվեարկության շենք: Տենդ արձանագրելու դեպքի մասին տեղեկությունը պետք է տրամադրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ✓ Ընտրողների ջերմաքրինինգ չի իրականացվում:
- ✓ Քվեարկության շենքի ելքում ընտրողի համար պետք է ապահովված լինի ախտահանիչ լուծույթով ձեռքերը մշակելու հնարավորություն: